Ըստ որում թուի ի բաժանմանէն
Ի Հռոմայեցւոց և յունականէն։
Օ՛հ, թէ վերստին առ նոյն դառնային,
Եւ միոյ մարմնոյ անդամք լինէին.
Ամէն եղիցի, և մի յամեսցի։

[Ցիշատակարան գրոց Ազպերտի]։

1686·

Ես Մինաս վարդապետ Թոխաթցի, որդի Զիլիֆտար Տէր Ալիքսանին, առաջնորդ Պուղտանոյ, տամ զայս թուղթս՝ որ է իմ ձեռացագիր, Բան Քրիստոֆ Տէր Զաքարիայի որդւոյն որ է ինքն դատաւոր Լովու Հայոց. թէ զիարդ մեռանելով եղբօր նորին Բան Խաչկոյին՝ ի յերկիրն Պուղտանայ, գիրք նոյն Բան Խաչկոյին անկան ի ձեռս իմ. այսինքն մէկ ճառընտիր ձեռագիր, զոր այժմ ուղարկեալ եմ ի Թոխաթ, և մէկ Հարանց վարք ձեռագիր՝ որ կայ ի մեռս, մինչ կենդանի եմ. զորս խոստանամ ուղարկել Բան Քրիստոսին ի Լով քաղաք։ Այս (բանիս) վկայ Վարդան վարդապետն առաջնորդ Լովայ քաղաքին, և Տէր Օքսէնտ վարդապետն Պօչանցի. զոր ձեռամբս իմոյ գրեցի, ի թվին ՌՃԼԵ. ի հոկտեմբերի Ի. Լով քաղաք։ [Պատարագատետր գրեալ յիշվիաժին]։

1688·

Այս է տապան Պարոն Յակոբին մահտեսի Մինասի որդուն, Եաղլօվու երեսփոխանին. յանգուցեալ ի Քրիստոս. թվ. ՌՃԼԶին, յունիս ԻԲ։ [ի Վարսաւիա, յեկեղեցւոջ Դոմինիկեանց]։

1688·

Ցիսուսի Քրիստոսի շնորհօքն վերստին նորոգեցաւ սուրբ Աւետարանս, արդեամբք բարեպաշտ եղբարց Սրբոց Հրեշտակապետաց, վասն պայծառութեան սրբոյ եկեղեցւոյ մայրաքաղաքի, որ է Կամենից. ի թուոյ Փրկչին ՌՈՁԸ, և ի գիւտ գրոց Հայոց թվ. ՌՃԼԻ ամաց. սեպտ. Ժ։ Պք. Տէր Օն. Կր։ (Օնոփրիոս կրօնաւոր)։ [Աշտարան առ Մխիթ. վիեանայ]։

1728·

Յոհաննէս Տօբիայ Ավկուսդինօվիչ՝ Աստուծոյ և առաքելական աթոռոյն (շնորհիւ) արհիեպիսկոպոս Լէօբոլսի, և ընդ բոլոր թագաւորութեանն Լեհաց և մեծի դքսութեան Լիթվանիոյ, Հայոց եպիսկոպոս Մոլտավիոյ նոյն ազգին Հայոց, սրբազան փափին մերոյ Բրեւլոդ ընտանի և Առընթերակայ. յորմէ հետէ առ-